ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԱԻՆ 209

ք.Երևան

2014-08-08

ՀՀ կառավարության աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի ղեկավար-նախարարի առաջին տեղակալ Գ. Դոմանյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ **Բաժանորդ**, մի կողմից և **<<ՍՕՍ Սիսթեմս>>** սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ի դեմս գլխավոր տնօրեն Վահագն Ծատուրյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ **Օպերատոր**, մյուս կողմից, առանձին և համատեղ հիշատակման դեպքում այսուհետ կանվանվեն համապատասխանաբար Կողմ կամ Կողմեր, հիմք ընդունելով փոխադարձ համաձայնությունը և ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ **Պայմանագիր**) հետևյալի մասին.

1. Պայմանագրում օգտագործված հասկացությունները

1.1. **Նախարարություն** - Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն:

1.2. **Օպերատոր** - << ՍՕՍ ՍԻՍԹԵՄՍ >> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն:

1.3. **Հսկման Համալիր Համակարգ** /այսուհետ՝ **ՀՀՀ**/ - ապարատա-ծրագրային միջոցների հավաքածու, բաղկացած **Հերթապահ-դիսպետչերական կենտրոն** համակարգից, /այսուհետ՝ **ՀԴԿ**/, Ներօբյեկտային հրդեհի տագնապի ազդանշանի փոխանցման ինքնաշխատ սարքից /այսուհետ՝ **Ներօբյեկտային սարք**/:

1.4. **Հերթապահ-դիսպետչերական կենտրոն՝ ՀԴԿ**- բաղկացած է վահանակային կայանից, ալեհավաքա-ֆիդերային սարքավորումներից, օպերատորի և ադմինիստրատորի աշխատանքային տեղի հավաքածուից:

1.5. **ՀԴԿ հեռախոսահամար-ՀԴԿ**-ին միացված հեռախոսահամար, որին փոխանցվում է ներօբյեկտային հրդեհի տագնապի ազդանշանի մասին հաղորդագրությունը:

1.6. **Ներօբյեկտային տագնապի ազդարարման ինքնաշխատ համակարգ** /այսուհետ՝ **Ներօբյեկտային համակարգ**/ - օբյեկտում գոյություն ունեցող տագնապի ազդարարման ինքաշխատ համակարգ:

1.7. **Ներօբյեկտային հրդեհի տագնապի ազդանշանի փոխանցման ինքնաշխատ սարք** /այսուհետ՝ **Ներօբյեկտային սարք**/ - նոր տեղադրվող կամ օբյեկտում գոյություն ունեցող տագնապի ազդարարման ինքնաշխատ համակարգին համակցվող սարք՝ նախատեսված օբյեկտում գոյություն ունեցող տագնապի ազդարարման ինքնաշխատ համակարգից հրդեհի տագնապի ազդանշանը ռադիոկապուղով, Internet/Eternet/GSM/GPRS/հեռախոսային ֆիքսված ցանցերով կամ կապի այլ միջոցներով **Նախարարության ՀԴԿ** փոխանցման համար: **Ներօբյեկտային սարքը** մոնտաժվում է **Օբյեկտում** հրդեհի բռնկման վերաբերյալ առավել արագ ազդանշան ստանալու և համապատասխան մարմինների կողմից հրդեհաշիջում կատարելու նպատակով:

1.8. **Բաժանորդ** - սույն պայմանագրի կողմ հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձ:

1.9. **Օբյեկտ** - շինություն կամ ցանկացած օբյեկտ, որում տեղադրված է **Ներօբյեկտային**

համակարգ, և որին համակցվելու է **Ներօբյեկտային սարքը**:
1.10. **Աշխատանքներ** - անհրաժեշտության դեպքում **Օպերատորի** կողմից **Ներօբյեկտային սարքի** մատակարարման, ինչպես նաև մոնտաժման, **Լոկալ ցանցին** միացման և գործարկման աշխատանքներ:
1.11. **Բաժանորդային վարձ - Օպերատորի** կողմից **Բաժանորդին** մատուցվող **Ծառայության** դիմաց **Բաժանորդի** կողմից վճարվող ամսական վարձավճար:
1.12. **Վճար - Բաժանորդի** կողմից **Օպերատորին** սույն պայմանագրի շրջանակներում կատարված **Աշխատանքների** և մոնտաժված **Ներօբյեկտային սարքի** համար նախատեսված վճար:
1.13. **Լոկալ ցանց** -ռադիոկապուղի, Internet/Eternet/GSM/GPRS/հեռախոսային ֆիքսված կամ կապի այլ ցանցեր, որոնցով տագնապի ազդարարման ինքնաշխատ համակարգից հրդեհի տագնապի ազդանշանը փոխանցվելու է **Նախարարության ՀԴԿ**:
1.14. **Հաշվետու ժամանակահատված** - օրացուցային ամիս:
1.15. **Մոնիթորինգ** - Օբյեկտում տեղադրված Ներօբյեկտային համակարգի տվիչների կողմից հրդեհի տագնապի ազդանշանների շուրջօրյա հսկում:
1.16. **Տեխնիկական սպասարկում – ՀՀՀ-ի** անխափան աշխատանքի ապահովում:
1.17. **Ծառայություն** – Օպերատորի կողմից **ՀՀՀ**-ի տեխնիկական սպասարկման և մոնիթորինգի ծառայությունների մատուցում:
1.18. **Տեխնիկական պայմաններ** – Օբյեկտում Ներօբյեկտային համակարգի առկայություն, որը պետք է համալրված լինի հետևյալ կապուղիներից որևէ մեկով՝ Contact ID, GSM, CSData, քաղաքային հեռախոսագիծ:
1.19. **Ընդհանուր պայմաններ** – Սույն Պայմանագրով նախատեսված Աշխատանքների կատարման և Ծառայությունների մատուցման ընդհանուր դրույթներ և պայմաններ, որոնք հրապարակված են www.sossystems.am կայք-էջում:

2. Պայմանագրի առարկան

2.1 **Օպերատորը** պարտավորվում է **Բաժանորդի Ներօբյեկտային համակարգը** հնարավորության դեպքում համակցել **ՀԴԿ-ին** և գործարկել, իսկ **Բաժանորդը** պարտավորվում է ընդունել **Աշխատանքները** և վճարել սույն Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում, ընդ որում **Բաժանորդի ներօբյեկտային համակարգը** պետք համապատասխանի **Օպերատորի** կողմից սահմանված Ընդհանուր և Տեխնիկական պայմաններին և ապահովի **Օբյեկտի** (Օբյեկտի գտնվելու վայրի հասցեն՝ ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական թիվ 1 շենք) համակցումը **Նախարարության ՀԴԿ-ին**: Այն դեպքում, երբ Բաժանորդը չունի Ներօբյեկտային սարք, որը համապատասխանում է Օպերատորի կողմից սահմանած տեխնիկական պահանջներին, ապա սույն Պայմանագրի հիման վրա Բաժանորդն իրավունք ունի Օպերատորից ձեռք բերել Ներօբյեկտային սարք:
2.2 **Օպերատորը** պարտավորվում է **Բաժանորդին** մատուցել **Ծառայություն**, որի դիմաց վերջինս **Օպերատորին** վճարում է **Բաժանորդային վարձ**՝ սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում:

3. Վճարման պայմանները և ժամկետները

3.1 **Օպերատորի** կողմից կատարված **Աշխատանքների Վճարի** չափը գոյանում է սույն

պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելված 1-ով սահմանված կարգով և կազմում է 120000 / հարյուր քսան հազար/ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

3.2 **Վճարը Բաժանորդը Օպերատորին** վճարում է ընդունման-հանձնման ակտը ստորագրելուց հետո 15 /տասնհինգ/ բանկային օրվա ընթացքում:

3.3 **Բաժանորդը Օպերատորի** կողմից **Ծառայության** մատուցման դիմաց վերջինիս վճարում է **Բաժանորդային վարձ**՝ ամսական 5400 / հինգ հազար չորս հարյուր / ՀՀ դրամի չափով՝ ներառյալ ԱԱՀ;

3.4 **Բաժանորդային վարձը Բաժանորդը Օպերատորին** վճարում է յուրաքանչյուր եռամսյակը մեկ՝ յուրաքանչյուր առամսյակին հաջորդող ամսվա 15-ը:

4. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

4.1 **Բաժանորդը** սույն Պայմանագրով **Օպերատորին** երաշխավորում է, որ չի գտնվում երրորդ կողմի հետ այլ պայմանագրային հարաբերության մեջ կամ չունի այլ պայմանավորվածություն, որն իրեն կկաշկանդի կնքել սույն Պայմանագիրը, Պայմանագիրը կնքված է նման լիազորություն ունեցող պատշաճ անձի կողմից:

4.2 **Բաժանորդն** իրավունք ունի՝

4.2.1 Ստուգել **Օպերատորի** կողմից **Աշխատանքների** կատարման ընթացքը՝ չմիջամտելով վերջինիս **Աշխատանքներին**: Պահանջել **Ծառայության** մատուցման ընթացքում **Օպերատորի** կողմից թույլ տրված թերությունների վերացում:

4.3 **Բաժանորդը** պարտավոր է՝

4.3.1 Սույն Պայմանագրով սահմանված ժամկետում վճարել **Աշխատանքների** դիմաց սահմանված **Վճարը** և **Ծառայության** մատուցման դիմաց սահմանված **Բաժանորդային վարձը**:

4.3.2 Ընդունել պատշաճ ձևով սույն պայմանագրի համաձայն **Օպերատորի** կողմից կատարված **Աշխատանքները** և **մատուցված Ծառայությունը**:

4.3.3 **Օպերատորին** տրամադրել **Օբյեկտում** անարգել մուտք և ելք:

4.3.4 Կատարել **Օպերատորի** կողմից սույն Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման անհրաժեշտությամբ ծագած բոլոր բանավոր և գրավոր հրահանգները:

4.3.5 **Օպերատորին** տրամադրել.

- **Օբյեկտի** հատակագիծը, իսկ առկայության դեպքում նաև հատակագծի վրա **Ներօբյեկտային համակարգի** գծագրված տեղաբաշխման սխեման;
- Հասցեային տվիչներ տեղադրված լինելու դեպքում, նշված տվիչների հասցեները;
- **Ներօբյեկտային համակարգը ՀԴԿ**-ին կամ **Ներօբյեկտային սարքին** համակցման համար անհրաժեշտ ելքերը /չոր կոնտակտ և այլն/;
- **Օբյեկտի** հրշեջ ծորակների տեղաբաշխման, հրդեհաշիջման համակարգի և տարահանման սխեմաները;
- Առկայության դեպքում՝ Օբյեկտի բնութագիրը;
- Օբյեկտի հրդեհային անվտանգության պատասխանատու անձի կոնտակտային տվյալները;
- Համապատասխան տարածք արտաքին ալեհավաքա-ֆիդերային սարքավորման տեղադրման համար համար /անհրաժեշտության դեպքում/;

4.3.6 **Օպերատորին** տրամադրել գործող **Ներօբյեկտային համակարգ**;

4.3.7 **Ներօբյեկտային համակարգը և Ներօբյեկտային սարքը** ապահովել անխափան սնուցման աղբյուրով;

4.3.8 Ապահովել **Ներօբյեկտային համակարգի** անխափան աշխատանքը, անսարքությունների դեպքում անհապաղ վերացնել դրանք:
4.3.9 Օպերատորի կողմից տրամադրված կապի միջոցներից (քարտեր և այլն) ոչ ՀԴՄ հեռախոսահամարին ուղարկված կարճ հաղորդագրությունների կամ զանգերի դեպքում Օպերատորին փոխհատուցել այդ հաղորդագրությունների և զանգերի արժեքը;
4.3.10 Օպերատորի կողմից տրամադրված GSM կամ ռադիոկապի ծառայությունները տրամադրող օպերատորի կապի միջոցներին՝ քարտերին կարճ հաղորդագրություններ կամ զանգեր ստանալու դեպքում Օպերատորին փոխհատուցել այդ հաղորդագրությունների և զանգերի արժեքը;
4.3.11 Ժամանակին վճարել **ՀԴԿ**-ի համակցման համար անհրաժեշտ ֆիքսած հեռախոսագծի և/կամ այլ կապուղու համար սահմանված վճարները, եթե համակցումը իրականացվել է նշված կապուղիների միջոցով;
4.3.12 **Ներօբյեկտային սարքը** չքանդել, չվնասել, չձևափոխել կամ որևէ այլ փոփոխության չենթարկել՝ առանց Օպերատորի գրավոր համաձայնության:
4.3.13 Կատարել **Օպերատորի** կողմից սահմանված **Տեխնիկական և Ընդհանուր պայմանները**;
4.3.14 Ապահովել **Ներօբյեկտային համակարգի ՀԴԿ**-ին համակցման տեխնիկական հնարավորությունը, հանձայն **Տեխնիկական և Ընդհանուր պայմանների**:
4.4 **Օպերատորը** սույնով երաշխավորում է, որ իրավասու է իրականացնել սույն Պայմանագրով նախատեսված Աշխատանքները և Ծառայությունների մատուցումը:
4.5 **Օպերատորն** իրավունք ունի՝
4.5.1 Սույն պայմանագրով սահմանված ժամկետում և կարգով ստանալ **Աշխատանքների** դիմաց սահմանված **Վճարը** և Ծառայության մատուցման դիմաց սահմանված Բաժանորդային վարձը;
4.5.2 Մուտք գործել **Օբյեկտ**՝ սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների իրականացման համար;
4.5.3 Չկատարել սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները, եթե **Բաժանորդը** սահմանված կարգով չի վճարել **Աշխատանքների** դիմաց.
4.5.4 Դադարեցնել Ծառայության մատուցումը, եթե **Բաժանորդը Բաժանորդային վարձը** վճարելու համար սույն Պայմանագրով նախատեսված ժամկետը լրանալու պահից հինգ և ավելի օրերի ընթացքում չի վճարել **Բաժանորդային վարձը**;
4.5.5 Չհամակցել **Ներօբյեկտային համակարգը** ՀԴԿ-ին, եթե Բաժանորդի կողմից չեն ապահովվել սույն պայմանագրով սահմանված **Տեխնիկական և Ընդհանուր պայմանները**:
4.6 **Օպերատորը** պարտավոր է՝
4.6.1 **Աշխատանքները** կատարել և Ծառայությունը մատուցել սույն Պայմանագրի դրույթներին համաձայն;
4.6.2 Վերացնել կատարված **Աշխատանքների** և մատուցած Ծառայությունների թերությունները;
4.6.3 Իր կողմից մոնտաժված **Ներօբյեկտային սարքի** համար տրամադրել երաշխիք՝ երկու տարի ժամկետով: Հետերաշիքային սպասարկումն իրականացվում է վճարովի հիմունքներով՝ կախված կատարվող աշխատանքի ծավալից և ինքնարժեքից:
4.6.4 **Աշխատանքների** կատարումն իրականացնել սույն պայմանագրով սահմանված ժամեկտում;
4.6.5 Ապահովել ՀՀՀ-ի անխափան աշխատանքը;
4.6.6 Շուրջօրյա մատուցել սույն պայմանագրով սահմանված **Ծառայությունը**;

4.6.7 Անհրաժեշտության դեպքում ապահովել ՀԴԿ-ին համակցման համար GSM կամ ռադիոկապի ծառայությունները տրամադրող օպերատորի կապի միջոցներով /քարտ և այլն/, եթե համակցումը իրականացվել է կապի վերը նշված տարատեսակներով;
4.6.8 Բաժանորդի պահանջով նրան՝ սույն Պայմանագրով որոշված հատուցմամբ օտարել **Ներօբյեկտային սարք**;
4.6.9 **Աշխատանքները** կատարել Բաժանորդի կողմից վճարումը սույն Պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում և չափով կատարելուց հետո:
4.6.10 Սույն Պայմանագիրը կնքելու պահից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում կատարել Աշխատանքները:

5. Աշխատանքների հանձնման-ընդունման կարգը
5.1 Սույն Պայմանագրի 2.1. կետում նշված Աշխատանքների ավարտից հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում Կողմերը կնքում են **Աշխատանքների** հանձնման-ընդունման ակտ:
5.2 **Աշխատանքների** հանձնման-ընդունման ակտը կնքելուց հետո հաջորդ օրացուցային օրը **Օպերատորն** սկսում է **Բաժանորդին** մատուցել **Ծառայությունը**, որն էլ համարվում է Ծառայությունների մատուցման սկիզբը:

6. Ժամկետներ

6.1 Սույն Պայմանագիրը գործում է անժամկետ:
6.2 Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի պահանջել Պայմանագրի վաղաժամկետ միակողմանի լուծում՝ այդ մասին նախապես 60 (վաթսուն) օր առաջ տեղյակ պահելով մյուս Կողմին:
6.3 Պայմանագիրը վաղակետ լուծելու դեպքում Օպերատորը Բաժանորդին է վերադարձնում չկատարված Աշխատանքի կամ չմատուցված Ծառայության համար վճարված գումարը, իսկ Բաժանորդը Օպերատորին վճարում է մինչ Պայմանագիրը դադարեցնելու պահը կատարված Աշխատանքի կամ մատուցված Ծառայության համար նախատեսված Վճարը:

7. Ֆորս մաժոր

7.1 Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքացիական հուզումները, գործադուլները, էլեկտրասնուցման խափանումները և հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:
7.2 Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Կողմերի պատասխանատվությունը և վեճերի լուծման կարգը

8.1 **Կողմերը** պատասխանատվություն են կրում սույն Պայմանագրի պայմանների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
8.2 Սույն Պայմանագրի 3.2 կամ 3.4 կետերով սահմանված պարտավորությունները չկատարելու և /կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, Օպերատորն իրավունք ունի **Բաժանորդից պահանջել վճարել տույժ**՝ յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար **Օպերատորին**, վերջինիս գրավոր պահանջի դեպքում, վճարում է տույժ՝ օրական՝ համապատասխանաբար **Վճարի** կամ **Բաժանորդային վարձի** 0.5%-ի չափով:
8.3 Սույն Պայմանագրից ծագած բոլոր վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ յոթօրյա ժամկետում համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
8.4 **Օպերատորը** ոչ մի դեպքում պատասխանատվություն չի կրում **Բաժանորդին** հրդեհի հետևանքով պատճառված վնասի համար: Հրդեհի դեպքում հրդեհի տագնապի ազդանշանի մասին հաղորդագրությունը ՀԴԿ-ին չփոխանցվելու դեպքում Օպերատորը Բաժանորդին վճարում է տուգանք երեք ամսվա ամսավճարի չափով:
8.5 Օպերատորը պատասխանատվություն չի կրում Ծառայությունները չմատուցելու կամ ոչ պատշաճ մատուցելու համար, եթե Բաժանորդը խախտել է Ընդհանուր պայմանները, Տեխնիկական պայմանները կամ որևէ այլ կերպ խոչընդոտել կամ անհնարին է դարձրել Օպերատորի կողմից Ծառայությունների մատուցումը, ինչպես նաև այն դեպքում, եթե Ներօբյեկտային հրդեհի տագնապի ազդանշանի փոխանցման սարքը ինքնաշխատ չէ և ազդանշանի փոխանցումն իրականացվում է Բաժանորդի պատասխանատու անձի միջամտությամբ:
8.6 Ներօբյեկտային համակարգի անսարք լինելու հետևանքով տագնապի կեղծ ազդանշան առաջանալու դեպքում, եթե այդ ազդանշանների թիվը մեկ ամսվա ընթացքում գերազանցել է երկուսը և Նախարարությունը դրանց արձագանքել է հրշեջ մեքենաների առաքմամբ, ապա Բաժանորդը պարտավորվում է Օպերատորին վճարել տուգանք՝ երկու կեղծ ազդանշանին հաջորդած յուրաքանչյուր կեղծ ազդանշանի համար՝ 20000 (քսան հազար) ՀՀ դրամի չափով:

9. Այլ դրույթներ

9.1 **Բաժանորդը** պարտավորվում է պահպանել Օպերատորի Ընդհանուր պայմանները, որոնք հանդիսանում են սույն Պայմանագրի բաղկացուցիչ մասը:
9.2 Սույն Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, կնքված երկու հավասարազոր օրինակներից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ;
9.3 Սույն Պայմանագիրը ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է մինչև դրանով սահմանված պարտավորությունների ամբողջական և պատշաճ կատարման ավարտը;
9.4 Սույն Պայմանագրի փոփոխությունները և լրացումները կատարվում են Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով, որոնք կնքման պահից կհանդիսանան սույն Պայմանագրի անբաժանելի մասը:

9.5 Սույն Պայմանագրով նախատեսված բոլոր ծանուցումները պետք է ուղարկվեն էլեկտրոնային նամակով. հեռապատճենով կամ գրավոր նամակով՝ սույն Պայմանագրում նշված հասցեներով, եթե սույն Պայմանագրի որևէ այլ կետով այլ բան սահմանված չէ:

10. Կողմերի վավերապայմանները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ կառավարության աշխատակազմ
Իրավաբանական հասցե՝ ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական թիվ 1 շենք
Գործունեության հասցե՝ ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական թիվ 1 շենք
ՀՎՀՀ՝ 02505554
Հ/Հ՝ 900011022085
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
աշխատակազմի ղեկավար-նախարարի առաջին տեղակալ՝
/ Գ. Դոմանյան /

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Սօս Սիսթեմս>> ՍՊԸ
Իրավաբանական հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 48, 1-ին մասնաշենք, 5-րդ հարկ, 2-րդ սենյակ
Գործունեության հասցե՝ Գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 48, 1-ին մասնաշենք, 5-րդ հարկ, 2-րդ սենյակ
ՀՎՀՀ՝ 02605138
Հ/Հ՝ 1930041816500100
<<Կոնվերս Բանկ>> ՓԲԸ
Գլխավոր տնօրեն՝
/ Վ. Ծատուրյան /

Հավելված 1
2014-08-04
Կնքված թիվ ԱԻՆ 209 Պայմանագրի

ք.Երևան

2014-08-08

Սարքավորումներ				
Անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը,առանց ԱԱՀ	Ընդամենը
Տանդեմ 2	հատ	1	75000.00	75000
Մարտկոց	հատ	1	5000.00	5000
Աշխատանքներ				
Համակցումը ՀԴԿ-ին	հատ	1	20000.00	20000

Ընդհանուր՝ 100000
ԱԱՀ %՝ 20000
Ընդհանուր վճարմանը ենթակա գումար՝ դրամ՝ 120000

Օբյեկտի գտնվելու վայրի հասցեն՝
ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական թիվ 1 շենք

Կողմերի Ստորագրությունները

Բաժանորդ

ՀՀ կառավարության աշխատակազմ
աշխատակազմի ղեկավար-նախարարի առաջին տեղակալ՝
/ Գ. Դոմանյան /

Օպերատոր

<<Սոս Սիսթեմս>> ՍՊԸ
Գլխավոր տնօրեն՝

/ Վ. Ծատուրյան /